Իսկ Արարատը պայծառ է եւ անտարբեր։

Վերջապէս, ժամը չորս ու կէսին, ճիշդ, Լոռուայ կողմում Ալլահվերդու զաւօդը եւ Երեւանում կոնեակի գործարանը, հիւանդ ոքլորի ձայն են հանում։ Հայաստանը սուլում է։

Լենինը մեռել ա...

* * *

Թաղումից մի ժամ յետոյ, պատմում են տեսնողները, Սեւանայ լճի ափին ձկնորսների հետ խօսքի է բռնուել անծանօթ մի մուրացիկ։ Դժգոյն դէմքով, պատռուած զգեստներով, բայց շատ տարօրինակ աչքերով։ Երբ մեկնել է, ձկնորսները, շատ տպաւորուած, որոշ ժամանակ դնացել են անյայտի ետեւից։

Ասում են, մարդը մաղնիսի նման իրեն էր քաշում։ Ախտայի մօտ, ճամբան իջնելու ժամանակ, մուրացիկը մի արշին վեր է բարձրացել եւ սահել է օդի մէջ։ Գլուխը լոյսերով է շրջապատուել։

Ձկնորսները փորձել են վազել, մօտենալ երեւոյթին, բայց չեն կարողացել. մի ինչ որ ուժ նրանց արգիլել է այդ անելու։

Ոմանք ասում են՝ Գրիգոր Լուսաւորիչն է. ուրիշները պնդում են, որը ինքը Ցիսուսն է։

Սովետական իշխանութիւնը, սաստիկ զայրացած, քննութիւն է բաց արել։

Զօրքերը խուզարկում են Հայաստանը։

*

* *

Էլ չեմ սպասում ես բարի ժպիտ
Եւ էլ չեմ խորշում հեգնանքից կծու.
Մարդը ե՛ւ բարի, ե՛ւ չար, նենգամիտ,
Ասես հեգնանքն է մարդն էլ Աստծու։

— Այսօր ջերմախինդ, անքէն ու բարի,
Բաց դուռ է հոգիս ամէնքի համար,
Ու տեսար յանկարծ թոյնից աշխարհի
Բաժակ եմ լեցնում ընկերիս համար։

Վնասն ի՞նչեր կ'անեմ, ինքս էլ չգիտեմ.
Գուցէ ծովն ընկնեմ թշնամուս համար,
Բաւարան երթամ, նգնեմ, աղօթեմ
Արիւնիս ծարաւ դահիճիս համար...

Եւ մի՞թէ հոգիս չար է ու պատիր...
Չէ, էլ չեմ խորշում հեգնանքից կծու.
Սիրի՛ր յաւիտեան, սիրի՛ր ու ատի՛ր,
Թունոտ հեգնանքն է մարդն էլ Աստծու։

* * *

Երբ անփուքօրէն մի կողմ ես նետում
Գլխարկդ այդ թաւիշ
Եւ վազքի ելնող նժոյգի նման
Վարսերդ ես ցնցում,
Սիրտս պայթում է, ինչպէս շամպայնի
Նոր բացուող մի շիշ,
Եւ շամպայն առա՜տ, շամպա՜յն իմ փրփրուն
Հոսում է, ցնծում...

Սիրում եմ արբել շոյելով քաշը
Քո արքայական,
Հմայքդ մերժել, մերժել ու ցաւով
Նորէն յետ կանչել.
Եւ բարձունքներէս անառիկ գահի
Իմ աղջկական
Հրամայում եմ ամէն մի մազիդ
Ինձանով շնչել։

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԳԵՂԻ ԵՐԳԵՐ

— Կալրդ շէ՞ն ըլլայ,
Կաթիկի տըղայ... —

Կալի առտու է.
Ցորեն կը կամնէ
Կաթիկին տըղան։
Մանչեր արեւխաշ, փարչերը շալկած,
Աղբիւրը կ'երթան։

Պըտուկով հողէ՝
Հարսը դալ կ'եփէ.
Կըրակն է մաղմաղ։
Կամը կը քաշեն որաներուն մէջ,
Եզները դանդաղ։

— Թեղրդ շէ՞ն ըլլայ,
Կաթիկի տըղայ.

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան